

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

آزتك جريدة يومية سياسية وأدبية - الدوة السؤلة، إنا درويشيان

1500 L.Ո. 74ԳԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 90 (20846) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 28 ՅՈՒՆԻՍ 2001 10 ԷՁ

ՆԱԽԱԳԱՀ ՁՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՀ ՊԸՐՐԻՆ



Լահուտ Էմ Դըրրի

Նախագահ գործիչ Էմիլ Լահուտ երկն ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Դըրրին: Անոնք մօտ մէկ ամիսէ ի վեր չէին հանդիպած իրարու:

Տեսակցութեանց ետք Դըրրի ըսաւ, որ անիկա յաւ ընթացած է: Նախագահական պալատը յայտնեց, թէ Լահուտ եւ Դըրրի համաձայն գտնուած են, որ տնտեսական վիճակը շատ նուրբ է եւ պէտք է միացեալ կեցուածքով կեդրոնանալ անոր դարձանուծին վրայ:

Անոնք նաեւ համակարծիք էին գրօսաշրջութեան եւ երկրագործութեան յաւելեալ կարեւորութիւն ընծայելու գաղափարին, ինչպէս նաեւ պետական պիւտճէի բացը վատթարացնող ամէն քայլի վերջ դնելու անհրաժեշտութեան շուրջ:

Լահուտ եւ Դըրրի նաեւ քննարկեցին չըջանալի գարգացումներն ու պաղեստինեան չըջանալի վիճակը:

Խորհրդարանի նախագահը նախագահ Լահուտի ներկայացուց Սուրի փառասունին ընթացքին իր յայտարարած տեսակէտը, թէ անհրաժեշտ է ստեղծել ազգային ճակատ մը, որ կը հիմնուի ազգային սկզբունքներուն՝ երկրին միութեան, իրանանցիներու միջեւ գորակցութեան, Սուրիոյ հետ յարաբերութեան եւ Իսրայէլի դէմ ազգային միացեալ կեցուածքին վրայ: Դըրրի յայտնեց, թէ հանրապետութեան նախագահը գորակցութիւն յայտնած է այս առաջարկին:

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ



Երեկ, երկուսուրդուրեան եւ մարմնակրքութեան նախարար Սեպուհ Յովնանեան այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Հանդիպման ընթացքին քննարկուեցան նախարարութեան աշխատանքներուն վերաբերող հարցեր եւ ապագայ ծրագիրներ:

ԱՅՍՕՐ՝ «ԵՐԵՒԱՆ» ԿԱՍՈՒՐՁԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Այսօր՝ Հինգշաբթի, 28 Յունիսին, երեկոյեան ժամը 6:00ին Պէյրութի քաղաքապետութեան որոշումով տեղի պիտի ունենայ Էշրեֆիէի «Հայաշէն» թաղամասը Պուրճ Համուտի միացնող կամուրջին «Երեւան» անուանումին պաշտօնական արարողութիւնը, Երեւանի քաղաքապետ Ռոպերթ Նապարեանի ներկայութեամբ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԿԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԲՈԼԻՆ ՓԱՌԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԸ ԺԱՄԱՆԵՅ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը երէկ Միջին Արեւելք ժամանեց թափ տալու համար ամերիկեան խաղաղարար ճիգերուն, որոնք կը միտին ամրապնդել պաղեստինեան ինքնիշխանութեան պիւտճէի, որ հաստատուած էր երկու շաբաթ առաջ:

Փաուըլի Միջին Արեւելք մեկնումին նախօրեակին, Սպիտակ Տան մէջ նախանցեալ գիշերը հանդիպում մը տեղի ունեցած էր Իսրայէլի վարչապետ Սիմոն Եարունի եւ Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշի միջեւ: Հանդիպումին աւարտին, Պուշ ըսաւ, որ Իսրայէլացիք եւ պաղեստինացիները պալի յառաջիկային արձա-նագրած են անցնող քանի մը օրերուն ընթացքին եւ թէ անոնք աւելի մօտեցած են խաղաղութեան, զոր



Փաուըլ՝ Մուպարաքի մօտ

տարիներէ ի վեր կը հետապնդեն:

Եարուն իր կարգին, Պուշի յայտնեց, որ եթէ տաւր օրուան համար ամբողջական անդորութիւն մը չտիրէ, Իսրայէլ յառաջ պիտի չմղէ ամերիկեան խաղաղարար ծրագիրը, որուն առանցքը կը կապմէ Միջին տեղեկագիրը: Եարուն վերա-տին շեշտեց, որ վայրագութեան ալիքին ճնշումին տակ խաղաղութեան բանակցութիւններ պիտի չկատարէ եւ այդ պատճառով է որ տասնօրեայ պալմանաժամ մը կը պահանջէ:

Խօսելով Փաուըլի Միջին Արեւելք այցելութեան մասին, Եարուն կասկածի տակ առաւ անոր յաջողութիւնը: Եարուն ըսաւ, որ Փաուըլ դժուար թէ յաջողի, որովհետեւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ պարկապէս որոշած է շարունակել վայրագարարները: Եարուն աւելցուց, որ եթէ զօրաւոր ճնշում չբանցւի Արաֆաթի վրայ, պաղեստինցի ղեկավարը անդորութիւն պիտի մնայ:

Շաբ.՝ Էջ 10

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ԱԿԱՐՏԵՑ ՖՐԱՆՍԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ երէկ արտաքին Ֆրանսա պաշտօնական այցելութիւնը Միջին Արեւելքը դէպի պատերազմ մղելու յանգանքով ամբաստանելով Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնը:

Փարիզի մէջ կատարած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Ասատ ըսաւ, որ Եարուն դէպի պատերազմ կը տանի շրջանը: Ան աւելցուց, որ ոչ Սուրիա, ոչ ալ արաբական որեւէ երկիր պատերազմ կ'ուզէ: Ասատ ըսաւ նաեւ, որ տասը տարուան կեանք ունեցող խաղաղութեան գործընթացը անտեսած է ՄԱԿի Ապահովութեան, Խորհրդի որոշումները, ինչպէս նաեւ 1991ի Մատրիաի խորհրդաժողովին որոշեցրած սկզբունքները: Ասատ դիտել տուաւ, որ խաղաղութեան

բանակցութիւնները յիշեալ սկզբունքներուն դէմ գործեցին: Մամուլի ասուլիսին ընթացքին, սուրիական դեսպանատունէն պաշտօնատարներ արգիլեցին մուտքը իսրայէլեան, քուէյթեան, լիբանանեան, ֆրանսական եւ ամերիկեան լրատու գործակալութիւններու մերկայացուցիչներուն, հակառակ անոր որ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը արտօնագիր տուած էր անոնց:

Ասատ ըսաւ նաեւ, որ Միացեալ Նահանգներ այցելելու ծրագիր չունի: Ան աւելցուց, որ Ծորճ Պուշի կառավարութիւնը տակաւին ոչինչ քրած է յառաջխաղացքի մէջ դնելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԲՈՖԻ ԱՆԱՆ ՎԵՐԸՏՐՈՒԵՑԱԻ ՄԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ



Բոֆի Անան

ՄԱԿ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- ՄԱԿի Ապահովութեան Զորեքշարթի օր միաձայնութեամբ երկրորդ նստաշրջանին մը համար ՄԱԿի ընդհանուր քարտուղար վերընարած է Բոֆի Անանը:

ՄԱԿի 189 անդամ հաշուող Ընդհանուր Ժողովը ընտրական գործընթացը պիտի ամբողջացնէ Ուրբաթ օր կայացնելիք բուժարկութեամբ:

63 տարեկան դանացի Անանի վերընտրութիւնը կը սպասուէր Մարտին ի վեր, երբ ան յայտարարած էր, թէ զարձեայ իր թեկնածութիւնը պիտի դնէ եւ ոեւէ ալ թեկնածու անոր մրցակից չէր ներկայացած:

Անոր ներկայ նստաշրջանը կ'աւարտի Դեկտեմբեր 31ին: Անան, որ 1997ին ընտրուած էր, յաջողած է գրեթէ հեզասուն կերպով անցնել ՄԱԿի քաղաքական «ականւած դաշտերէն»:

ՊՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԱՅՎԻՈՅ ՄԵՋ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆՈՐ ԴԵՍՊԱՆՆԵՐ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ

ՌԱՇԻՆԿԹԸՆ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ որոշած է նոր դեսպաններ նշանակել Հայաստանի եւ Լաքվիոյ մէջ, կը հաղորդէ պաշտօնապէս Սպիտակ Տունը:

Պուշ Հայաստանի համար ընտրած է ձոր Օրտուէյը, որ ներկայիս Ռուսիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպանին փոխանորդն է, իսկ Լաքվիոյ համար նկատի առած է Պրայըն Քարլսընը, որ Լոնտոնի, Մատրիտի, Պելկրատի եւ Օսլոյի մէջ ամերիկեան դեսպանատուներուն մէջ բարձրաստիճան պաշտօններ վարած է:

Նշենք, որ այս որոշումները կը կարօտին Ծերակոյտի վաւերացման: Հայաստանի մէջ երկար առնէն ի վեր Միացեալ Նահանգներու դեսպանն է Մայքըլ Լեմըն:

ՃԱՓՈՐՏ ՄԵՋ

ՀԱՅԵՒԹԱՓՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՄԻԱՅԵԱԼ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ ԳՈՒՄԱՐՈՒԵՑԱԻ

ԵՐԵՒԱՆ, 27 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի գլխաւորած պատուիրակութեան ծափոն այցելութեան շրջագիրին մէջ Զորեքշարթի օր տեղի ունեցած հայ - ճափոնական եւ ճափոն - հայկական տնտեսական յանձնախումբերու միացեալ անդրաւիճակի նիստը:

Հանդիպումին քննարկուած են երկկողմանի գործակցութեան, գրեզանտեսութեան մարզի զարգացման եւ Հայաստանի մէջ ներդրելու կարելիութիւններուն առնչուող հարցերը:

Նախարար Օսկանեան եւ առեւտուրի եւ արդիւնարեւութեան նախարար Կ. Ճշմարիտեան հանդիպում ունեցան նաեւ ծափոնի տնտեսութեան, առեւտուրի եւ արդիւնարեւութեան փոխ նախարար Ք. Ֆուրուեայի հետ: Կարեւոր նկատուեցաւ առեւտրական յարաբերութիւններու քաջալերման համար իրաւական հիմքի ստեղծումը, ինչպէս նաեւ գիտական լազմաթիւ ճիւղերու մէջ հետազօտական միացեալ աշխատանքներու իրագործումը եւ փոքր ու միջին ձեռնարկութիւններու զարգացումը:

«ԿԱԶՓՐՈՄ» ԵՒ «ԻԹԵՐԱ»

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԳՈՐԾԱԿՅԵԼՈՒ ԻՐԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱԶԱՏԱՐԻՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Ռուսական «Կազփրոմ» եւ «Իթերա» ընկերութիւնները պատրաստ են իրան - Հայաստան կազատարի կառուցման համար գործակցելու իրանի Քարիզի Ազգային Ընկերութեան եւ Հայաստանի ուժանիւթի նախարարութեան հետ:

140 թմ. երկարութեամբ եւ 120 միլիոն տոյար արժողութեամբ կազատարին կառուցումը ստանձնած միջազգային ընկերակցութեան անդուները 25 Յունիսին Մոսկուայի մէջ ունեցած են հանդիպում մը, որուն ընթացքին քննարկած են իրենց ծրագիրները:

Կազատար իրանի կարելիութիւն պիտի տայ դէպի Հայաստան արտածելու տարեկան մէկ միլիար խորանարդ կազ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ Կ'ԱՅՅԵԼԵ ԼՎՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Յովհաննէս Պօղոս Բ. պապը Ուքրաինա այցելութեան շրջագիրին մէջ այցելեց Լվով քաղաքի հայկական Ս. Աստուածածին եկեղեցին:

1363ին կառուցուած հայկական եկեղեցւոյ մէջ պապը դիմաւորած են Ուքրանիոյ հայոց թեմի առաջնորդը եւ Ուքրանիոյ մէջ Հայաստանի դեսպանը: Ներկայ էին նաեւ Ուքրանիոյ կեդրոնական իշխանութեան, շրջանային եւ քաղաքային վարչակապմէրու պաշտօնատարներ, հոգեւորականներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

(ԱՐՄԷՆՓՐԷՍ)

ԱԶՐՊԵՅՃԱՆ ԱՄԵՆ ԳՆՈՎ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԸՆԵ ԱԼԻԵՒ

Այրպէյճանի նախագահ Հայաթ Ալի-եւ յայտարարեց, որ Այրպէյճան գործի պիտի լծէ իր բոլոր կարելիութիւնները՝ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման համար:

Երկուշաբթի օր բանակի ստեղծման տասնամեակին առիթով կազմակերպուած հաւաքի մը ընթացքին Ալի-եւ ըսաւ, որ եթէ ԵԱՀԿի Մինսքի խմբակի միջնորդութեամբ ընթացող բանակցութիւնները շօշափելի արդիւնք չունենան, ապա այրպէյճանական բանակը պատրաստ է «պատագրելու հայկական ուժերուն կողմէ գրաւուած այրպէյճանական հողերը եւ վերականգնել երկրին հողային ամբողջականութիւնը»:

Հաւաքին խօսք առաւ նաեւ Այրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիււ, որ ըսաւ, թէ «այրպէյճանական բանակը պատրաստ է պատագրելու գրաւուած հողերը»: Ան ըսաւ, որ «եթէ Հայաստանի իշխանութիւնները չհրաժարին իրենց ծաւալապաշտական ծրագիրներէն, ապա պարտաւորուած են իրենց հրաժարուելու համար երկրին ինքնիշխանութիւնը եւ հողային ամբողջականութիւնը»:

Տօնակատարութեան նախօրեակին, Ալի-եւ ստորագրած է հրամանագիր մը զի-

նոտրականներու եւ պաշտպանութեան նախարարութեան պաշտօնատարներու ամսականները 1.5 անգամով բարձրացնելու մասին: Հրամանագիրը պօրու կը դառնայ 1 Սեպտեմբերին սկսեալ:

Միւս կողմէ, Երեքշաբթի օր տուած մամուլի ասուլիսի մը ընթացքին Ապիււ ըսաւ, որ Այրպէյճանի բանակը մտադիր է պարգացնելու ՕԹՄՆի անդամ երկիրներու բանակներուն հետ գործակցութեան» ծրագիրին շրջագիրին մէջ կը նախապատրաստուին վիճարկութիւններ, որոնք տեղի պիտի ունենան Նոյեմբերին Այրպէյճանի մէջ:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՌՈՊԵՐԹ ՆԱԶԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱՏՆԱՆ ՔԱՍՍԱՐԻ

Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ երէկ այցելեց Լիբանանի Առեւտուրի Գրասենեակներու Համադաշնակցութեան նախագահ Ատնան Քասսարի: Հանգիւյուն մին Ներկայ գտնուեցան Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան, գրասենեակի անդամներ եւ հայ գործարարներ, ինչպէս նաեւ Պէյրուսի քաղաքապետ Ապտէլ Մընէմ Արիս:

Քննարկուեցան երկու երկիրներուն միջեւ գործակցութեան եւ առեւտրական փոխանակումներուն զարկ տալու միջոցները:

Քասսար զրուարիքով խօսեցաւ երկկողմանի յարաբերութեանց մասին, յայտնելով, որ Լիբանան պիտի օգնէ Հայաստանի՝ մաս կազմելու Առեւտուրի Սիջազային Գրասենեակին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ

«ՄԻՏԸԼ ԻՍԹ»Ի ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՆԱՆԿԱՑՈՒՄԸ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՐՑ ԶԿԱՅ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին խօսեցաւ հանրապետութեան նախագահի գործիքի Էմիլ Լահուտի հետ իր ունեցած տեսակցութեան եւ «Միտըլ Իսթ» օդանավային ընկերութեան հարցին մասին:

Պրրի ըսաւ, որ նախագահական պալատ իր այցելութիւնը յաւելեալ հիմնադրով ունի ընթացքին քննարկուած են տեղաւայրու միջազգային պարագայները: Ան ըսաւ, որ նախագահ Լահուտի ներկայացուցած էրկիրին մէջ միասնական մթնոլորտը:

ամրապնդելու համար ազգային ճակատ մը ստեղծելու առաջարկը, որ պիտի չէզոքացնէ ամէն տեսակի համայնքային ու դաւանական պաշտակցութեան մասնաւոր իրաւանցիները եւ անոնց հիմնական քաղաքական ուժերը համախմբելով տունեայները շատ աւելի կարեւոր են քան անոնց տարակարծութեանց նիւթերը:

Խորհրդարանի նախագահը հաւաստեց, որ «Միտըլ Իսթ» օդանավային ընկերութեան սնանկացումը յայտարարելու հարց չկայ, եւ անոր հարկաւորութեան միջոցով ընթանայ: Պրրի նկատարեց, որ երկու կողմերէն իրար դէմ չեն ծառայող շահեր:

«ՄԻՏԸԼ ԻՍԹ»Ի ՀԱՐՑԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԿԱՐԶԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՏՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ աշխատանքի նախարար Ալի Քան-սոյի ներկայութեան հանդիպում մը ունեցաւ «Միտըլ Իսթ» օդանավային ընկերութեան պաշտօնէաներու սենտիքաներու եւ աշխատանքային կարգաւորումներու համադաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ, քննարկելու համար ընկերութեան հարցն ու անոնց պահանջները:

Աշխատանքի նախարար Ալի Քանսօ երէկ ժողով մը գումարեց աշխատանքային խորհուրդին:

տաւորական ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Հասսան Ղարսնի, ընդհանուր քարտուղար Պասսամ Թէյյսի, օդային փոխադրամիջոցներու սենտիքաներու համադաշնակցութեան եւ «Միտըլ Իսթ»ի աշխատանքային կարգաւորումներու սենտիքաներու եւ ներկայացուցիչներուն հետ:

Ժողովին ետք ան յայտարարեց, որ ժողովականները երեկոյեան վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ հանդիպումի մը ընթացքին պիտի շարունակեն քննարկումները, իսկ «Միտըլ Իսթ»ի սենտիքաներու ծրագրած գործադուլը կարեւոր է երկխօսութեան արդիւնքներէն:

Քանսօ նաեւ ըսաւ, որ նախարարութիւնը միջնորդութիւն կ'ընէ սենտիքաներուն եւ ընկերութեան վարիչ խորհուրդին ծրագրած գործադուլին դէմ: Ան վստահեցուց, որ «Միտըլ Իսթ»ը սնանկացած յայտարարելու նիւթ չկայ:

«Միտըլ Իսթ» օդանավային ընկերութեան պաշտօնէաները եւ աշխատանքային կարգաւորումները երէկ շարունակեցին իրենց նստացոյցը ընկերութեան կեդրոնատեղիին առջեւ:

Ընկերութեան վարիչ խորհուրդի նախագահ Մոհամէտ Հուսէ սովորականին պէս ներկայացաւ իր գրասենեակը, մինչ ընկերութեան կեդրոնատեղիին շրջակայքը ապա-տարեց:

հովութեան ուժերու միջոցառումները կը մնան ի գործ:

«Միտըլ Իսթ» օդանավային ընկերութեան պաշտօնէաներու եւ աշխատանքային կարգաւորումներու եւ հիւրընկալողներու եւ սենտիքաները երէկ հարկաւորութեան հետ խորհուրդին միջեւ 10 Յունիս սառեցուցած է պաշտօնէութեան դէմ միջոցառումները, աւելի ընդամենը համար աշխատանքի նախարար Ալի Քանսոյի հովանաւորութեամբ երկխօսութեան, որպէսզի գտնուի բոլոր կողմերուն համար զոհացուցիչ լուծումի տարագ մը:

Հաղորդագրութիւնը նաեւ ըսաւ, որ սենտիքաներու բողոքի արտայայտութիւններուն, նստացոյցներուն ու գործադուլին ճակատագրի պիտի վճռուի աշխատանքի նախարարին ներկայութեամբ վարիչ խորհուրդի ներկայացուցիչներուն հետ ժողովին արդիւնքներուն յոյսին տակ:

Հաղորդագրութիւնը կարգաւորութեան աշխատանքներուն եւ պաշտօնէաներու սենտիքային նախագահ Հիւսէյն Ապպաս, որ կոչ ուղղեց բոլոր պաշտօնէաներուն հրաժարական շնորհալուստեցութեան հետ ժողովին արդիւնքներուն յոյսին տակ: Ան նաեւ կոչ ուղղեց պաշտօնէաներուն «Միտըլ Իսթ»ի կապուած ընկերութիւններու փոխանցուելու դիմում չներկայացնելու:

Սենտիքաները պատահանաւոր պիտի չըլլան ունենալ պաշտօնէային, որ կը խախտէ շարքերու միասնութիւնը նման արարքներով, եւ կոչ ուղղեց շարունակելու նստացոյցը:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ՅՈՒՆԻՍ 22
ԿԱՐԶԱԿԱՆ
ՆՃԱՆ
ՓԱՆԱՆՃԵԱՆ
ՃԵՄԱՐԱՆԵՆ
ՆԵՐՍ

ԲԱՆՏԱԴՈՐՈՒԱԾ

Տէր եւ տիկին
Վիգէն եւ Վիգի
Աշտեան
բախտաւորուած են
առջինեկ աղջիկ
կուսակով մը

ԲԱՌԻԼ -
ՄԵՅՐԻ

Լուս Անճելլա
26 Յունիս 2001

ASHJIAN
TOURS
One week
VARNA
255\$
T. 01 261177 - 265068
240654 - 03 233978

ASHJIAN
TOURS
ՀԱՅԱՍՏԱՆ
Երթ ու դարձի տուն
299\$
Խմբային տուն
238\$
T. 01 261177 - 265068
240654 - 03 233978

«ԱՁԴԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Մակի Եարտըմեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Օննիկ Ալաճաճեան 20,000 լ. ո.

ՄԱՀԱԶԴ

Տոբթ. Ատրինէ Գարագաշեան
Տիկին Հերմինէ Պապիկեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Նազօ Գարագաշեան
Տէր եւ տիկին Րաֆֆի Գարագաշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ռուբէն Գարագաշեան
Տէր եւ տիկին Տանրոյ Պապիկեան եւ զաւակունք
Տիկին Քնար Ենոյքեան
Տէր եւ տիկին Պերճ Ենոյքեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Հրաչ Ենոյքեան եւ զաւակունք
Գարագաշեան ընտանիք
Հայաճեան ընտանիք
Եսայեան ընտանիք
Արզումանեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գումարեն իրենց մօր, մեծ մօր, հօրաբորւք եւ հարազատին՝

ԵՆԱՐ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ (Ծնեալ՝ ԵՆՈՎՔԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երուսաղէմի մէջ:
Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարեցան Երեքշաբթի, 19 Յունիս 2001ին, Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

● Ներկայ ընդունիլ իրրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Նազօ Գարագաշեանի բնակարանը, Թապարիս, Շրեմտե փողոց, «Jardin De Tabaris» շէնք, bloc D, 6րդ յարկ, Ուրբաթ 29 եւ Շաբաթ 30 Յունիսին:

ՄԱՀԱԶԴ

Օր. Մելինէ Նաճարեան
Օր. Նորա Նաճարեան
Պր. Վիգէն Նաճարեան
Օր. Մարալ Նաճարեան
Օր. Թալին Նաճարեան
Պր. Կարպիս Դաւիթեան
Տէր եւ տիկին Ժորժ եւ Մանուշակ Դաւիթեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Սողոմոն եւ Պէթի Փիլաճեան
Տէր եւ տիկին Յակոբ եւ Սիլվա եւ զաւակունք
Յարութիւնեան ընտանիքներ
Սվաճեան ընտանիքներ
Տիկին Հայկունհի Դաւիթեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մանուէլ եւ Կիւրիգար Դաւիթեան եւ զաւակունք
Եւ համայն ազգականներ կը գումարեն իրենց մօր, քրոջ, հօրաբորւք եւ հարազատին՝

ԱՆԳԻՆԷ ՆԱՃԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ԴԱԻԹԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 25 Յունիս 2001, երեկոյեան ժամը 10:30ին, Պրուքլին Նիւ Եորք, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 29 Յունիս 2001, կէսօրէ առաջ ժամը 9:30ին, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Մանհաթըն, Նիւ Եորք:

● Ներկայ ընդունիլ իրրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Հինգշաբթի եւ Ուրբաթ օր:
● ՄԱՆՈՒՄ՝ Ժոսիան Ժողկեպտակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել բարեփառական եւ կրթական հաստատութիւններուն:



ՀՕԽԻ

«ԱՂԱՒՆԻ ՓԱՓԱՉԵԱՆ»
ՄԱՍՆԱԾԻՒՂ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻՐ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 3 Յունիս 2001, կեսօրէ առաջ ժամը 9:30ին, Զալքայի «Գարեգին Նժդեհ» ակումբին մէջ:
Ընկերակիցներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է:

ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Արգարեան Ազգ. Վարժարանի հոգաբարձութեան կազմակերպած վիճակահանութեան ձեռնարկին վիճակահանութիւնը, որ տեղի պիտի ունենար 30 Յունիս 2001ին՝ յետաձգուած է 18 Յունիսին:

Հ. Բ. Բ. Մ.

ՕԳՆԱԿԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻԿԱՐԻՔ

Միութիւնս կարիքը ունի համալսարանաւարտ, մանկավարժական վկայական ունեցող օգնական մանկապարտիզպանուհիի մը:
Ընտրողներուն համար կը խնդրուի դիմել Հ. Բ. Բ. Մ. Կեդրոնական Գրասենեակ, Տեմիքեան Կեդրոն, 3րդ յարկ, հեռաձայնի թիւեր՝ 04 522842 եւ 04 522843:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրուհի Թաւաքեան եւ զաւակը՝ Գէորգ
Տէր եւ տիկին տոբթ. Յովհաննէս Թաւաքեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Կարօ Անտոնեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գէորգ Գազանճեան եւ զաւակունք
Թաւաքեան ընտանիք
Խօջէճեան ընտանիք
Անտոնեան ընտանիք
Գազանճեան ընտանիք
Ազգարեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գումարեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, հօրեղբօր եւ հարազատին՝

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱՍԼԱԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 26 Յունիս 2001, երեկոյեան ժամը 8:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան թուականը կը յայտարարուի հետագային:

● Ներկայ ընդունիլ իրրեւ մահազոյ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ Կիրակի, 1 Յունիս 2001ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռիս վեհափառ հայրապետ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ընտրութեան եւ օծման 6րդ տարեդարձին առիթով, յընթացս Ս. պատարագի թմին եկեղեցիներուն ներս պիտի կատարուի՝

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂՈՍԵ

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու հոգեպարար արարողութեան եւ աղօթելու վեհափառ հօր քաջառողջութեան եւ արեւշատութեան համար:

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳ. Ս. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Սրբոց Զառանցիկ Մանկանց վարժարանի տնօրէնութիւնը իր նախկին եւ նորեկ աշակերտներու ծնողներուն ուղարկութեան կը յանձնէ հետեւեալները.

1.- 2001-2002 կրթական տարեշրջանի վերամուտը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 2 Յունիսին:

2.- Յառաջիկայ տարեշրջանին համար արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ Հինգշաբթի, 26 Յունիս 2001, ամէն օր ժամը 9:00էն 12:00:

3.- Այն ծնողները, որոնք պիտի ուզեն զեղչ ստանալ, պարտին զեղչի դիմումագիրները անմիջապէս ստանալ վարժարանի քարտուղարութենէն եւ զայն ներկայացնել մինչեւ 26 Յունիս 2001:

Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ
Դարուհի Յովակիմեան (Երկրորդական)
Պօղոս Գ. Կարմիրեան (Միջնակարգ)
Լեւոն Կ. Նազարեան (Նախակրթարան)
2001-2002 ԿՐԹԱՇՐՋԱՆ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Բ. Բ. Միութեան Լիբանանի սեփական վարժարաններու 2001-2002 տարեշրջանի արձանագրութիւնները, նախկին աշակերտներուն համար, տեղի պիտի ունենան 18 Յունիսէն 20 Յունիս 2001: Արձանագրութեան սակ՝ 300,000 լ. ո.:
Լեւոն Կ. Նազարեան եւ Դարուհի Յովակիմեան վարժարաններու աշակերտները պիտի արձանագրուին Զապէլ Մովսէսեան Կեդրոն, Ա. յարկ (Սին Էլ Ֆիլ), Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8:30էն կեսօրէ ետք ժամը 3:00: Հեռաձայն՝ 01 481319 եւ 01 484196:

Իսկ Պօղոս Գ. Կարմիրեանի աշակերտներուն արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերը, Կարմիրեան վարժարանէն ներս (Անթիլիաս), հեռաձայն՝ 04 413933 եւ 04 522841:

Միայն արձանագրութեան օրերուն կարելի է զեղչի դիմումագիր ստանալ եւ զայն լեցնել ետք մինչեւ Յունիս 31, յանձնել 2. Մովսէսեան Կեդրոն, Ա. յարկ, տիկին Լուսնակ Նորոյեանին:

Հ. Բ. Բ. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ԱՐԵՂԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 1 Յունիս 2001ին, Ս. Բ. Մանկանց եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ Ս. եւ անմահ պատարագը պիտի մատուցէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԵՂԱՐԳ
ԱՐԵՂԱՅ ԲԻՒՄԲԷՔԵԱՆ

Սկիզբն ժամերգութեան
Պատարագ
Քարոզ

Ժամը 7:30ին
Ժամը 9:30ին
Ժամը 10:30ին

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու այն հոգեպարար արարողութեան հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԱՐԵՂԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 1 Յունիս 2001ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ պատարագը պիտի մատուցանէ եւ քարոզէ՝

ՀՈԳԵ. Տ. ՄԱԿԱՐ ԱՐԵՂ. ԱՇԳԱՐԵԱՆ

Սկիզբն ժամերգութեան
Պատարագ
Քարոզ

Ժամը 7:30ին
Ժամը 9:30ին
Ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու այն արարողութեան եւ լսելու հայր սուրբին անդրանիկ պատգամը:

Ի ԴԻՍԱՅ ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ

ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Ազգ. Արգարեան վարժարանի մանկապարտեզի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 17 Յունիս 2001, ժամը 11:00ին, վարժարանի հանդիսասրահին մէջ: Ամսվերջի հանդէսին նրւթն էր՝ «Վարժարան-նրւ տարեկարծր»:

Մանկապարտեզի աշակերտները իրենց երգերով, պարերով եւ արտասանութիւններով ստեղծեցին ստեղծական մթնոլորտ: Վարժարանի տնօրէն Գեղանի էթիւմ-մեգեան իր շնորհակալութիւնը յայտնեց աշակերտներուն, որոնք մեծ հաճոյքով իրագործած էին իրենց մատահաւաք պարտականութիւնները: 2000/2001 տարեշրջանի աւարտին վկայուեցան հետեւեալ աշակերտ-



Ազգ. Արգարեան վարժարանի մանկապարտեզի շրջանաւարտները:

Յարութ Գուլում-նեան, Գեորգ Զարարեան, Գոգո Սրվանեան, Մանուկ Գրորոսեան, Սագո Շանիկեան, Սագո Սրվանեան, Վարդան Աւետիսեան, Վարդան Կիրոսեան, Վարդան

Պեռնեան, Ալիկ Սալի, Սիմիա Ղաֆարի, Հեկեկ Ուրֆալեան, Ռոբա Արամունի, Սրեֆա-րի Ղաֆարի, Վանայ-Բալիկ Զարմարեան եւ Գալար Զուլեան:

ԹՂԹԱԿԻՑ

ՔԱՀԼԻ ՄԱՄՆԱԽՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԻՄ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ (1971 - 2001)

Ուսումնական տարուան աւարտին իւրայայտուկ էր ՔԱՀԼԻ Մասնաւոր դասարաններու ամսվերջի հանդէսը, որ նուիրուած էր հաստատութեան երեսուն տարուան ծառայութեան եւ որ տեղի ունեցաւ Զորքշարթի, 20 Յունիս 2001ի երեկոյեան ժամը 5:00ին, ՔԱՀԼԻ հանդիսասրահին մէջ:

Հանդիսութիւնը սկսաւ ՔԱՀԼԻ Մասնաւոր դասարաններու երգչախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու երգեցողութեամբ, որմէ ետք Մասնաւոր դասարաններու պատասխանատու Ռիթա Պարմաքարեան ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք, 2001ը համարեց յիշատակելի թուական մը, որ կը նշէ հաստատութեան երեսուն տարուան վաստակը եւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակը: Ապա ան ներկայացուց ՔԱՀԼԻ Մասնաւոր դասարաններուն խաղացած կարեւոր դերը՝ վերջին երեսուն տարիներուն ընթացքին դպրոցական յուրը զօտարութիւններ ունեցող աշակերտներուն մտային, հոգեկան, ուսումնա-



Քահլի Մասնաւոր դասարաններու ուսուցչական կազմը:

տութեան աշխատանքներուն նպաստող տնձերուն: Հանդիսութեան ընթացքին միջակ տղաքը եւ աղջիկները հայերէն եւ արաբերէն լեզուներով արտասանեցին «Ուրախ բացականչութիւն» (Մաղմուս 100), իսկ Ա., Բ., Գ., Դ. - խումբերու աշակերտները ներկայացուցին հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով խմբային արտասանութիւններ, երգեր ու պարեր: Դ. - խումբի աշակերտ Տիանա Թաքլի փոխանցեց իր շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսքը:

ՔԱՀԼԻ խնամակալութեան ատենապետ վեր. Ռոպեր Սարգիսեան հաստատութեան երեսնամեակին առիթով արտասանած իր խօսքին մէջ վեր առաւ իրագործուած աշխատանքները եւ ուսուցիչներուն դերակատարութիւնը: Ապա մեծ աղջիկները ներկայացուցին Յ. Թումանեանի «Տերն ու ծառան»:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց ՔԱՀԼԻ տնօրէն Գեորգ Գարապոյանեան, որ արժեւորեց երեսուն տարիներու գործունէութիւնը, որ հիմնուած է սիրոյ վրայ, եւ կոչ ուղղեց սիրոյ սերմեր ցանել իրենց սաններուն հոգիներուն մէջ: Ապա ան բեմ հրաւիրեց հաստատութեան ուսուցիչները եւ անոնց յանձնեց «Երեսուն տարուան ծառայութեան» յուշանուէրներ եւ ծաղիկփունջեր:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՌՈՒԶԱՆԱՒ ՌՈՒԿԵԱՆ

ԽՈՒՄԲ ՄԸ ԿԻՆԵՐ ԿԸ ՅԱՐՁԱԿԻՆ ԱՆՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՎՐԱՅ

Երկուշաբթի, 25 Յունիսի կէսօրուան մօտ, Հայաստանի Ազգային Ժողովի չէնքի մուտքին, շուրջ 10 կիներ յարձակած են Ազգային Ժողովի Հ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան անդամ Ալվարդ Պետրոսեանի վրայ, մարմնական թեթեւ վնասներ հասցնելով անոր:

Այս մասին «Ազատութիւն» ծայնասփիւռի թղթակիցին հետ հարցազրույց մը ունենալով՝ Պետրոսեան բացատրած է, թէ միջադէպը հրահրուած էր զրդիչներու կողմէ, որոնք կը փափաքէին քաղաքական հեղինակութիւն

ձեռք բերել 27 Հոկտեմբերի գործին շահարկումով, սակայն անոնք «այդ մէկը կ'ընեն ամէնէն տղէտ ձեռով», ընդգծած է ան:

Ըստ Ա. Պետրոսեանի, 1988ին ի վեր նման միջադէպ չէր պատահած իրեն եւ ինք արարքին գծով իրաւապահ մարմիններուն դիմելու մտադրութիւն չուէր:

Ան աւելցուցած է նաեւ, թէ իր խնդրանքով Ազգային Ժողովի չէնքի ապահովութեան ոստիկանները չեն միջամտած զէպքին:

ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ «ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՕԴԱԿԱՅԱՆԷՆ ԵՏ ԿԸ ԴԱՐՁՈՒԻ

Հայաստանի Ազգային Ժողովի Երկուշաբթի, 25 Յունիսի արտակարգ նիստին Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի քարտուղար եւ Ազգային Ժողովի Համայնավար Կուսակցութեան պատգամաւորական խմբակցութեան անդամ Նորիկ Պետրոսեան յայտարարած է, թէ 22էն 24 Յունիսին Աթէնքի մէջ տեղի ունենալիք միջազգային համագումարի մը ներկայ գտնուելու համար «Զուարթնոց» օդակայանէն Յունաստան մեկնումի ընթացքին, ճամբորդական բոլոր ձեւակերպումները կատարելէ ետք, թռիչքէն քանի մը վայրկեան առաջ, յատուկ մարմիններու աշխատակիցներ ներկայացնելով նախագահ Ռոպէրթ Քոչարեանի համապատասխան հրամանագիրը, գրաւած են դիւանագիտական իր անցագիրը՝ արգիլելով իր մեկնումը:

Այս յայտարարութիւնէն ետք Ազգային Ժողովի նախագահ Արմին խաչատրեան ընդգծած է, թէ Ազգային Ժողովի թիւ չի տար, որ «որեւէ մարմին Ազգային Ժողովի պատգամաւորներէն մէկուն մազին դաչի»:

Ապա ան խոստացած է պատահածին համար պաշտօնական բացատրութիւն պահանջել համապատասխան մարմիններէն եւ գայն ներկայացնել Ազգային Ժողովին:

Արտակարգ նիստէն ետք, պատասխանելով լրագրողներու հարցումներուն, Ն. Պետրոսեան յայտնած է, թէ միջադէպը Համայնավար Կուսակցութեան զէմ ուղղուած սպրդանք էր:

Սակայն լրագրողները կրցած են պարզել, թէ Նորիկ Պետրոսեան իր դիւանագիտական անցագիրը իրբեւ պատգամաւոր ստացած է 1998ին, իսկ վերընտրուելէն ետք, ըստ օրէնքին, չէր նորոգած գայն:

ԿՐԱՍՆՈՏԱՐԻ ՄԷՁ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ «ԵՐԿՐԱՄԱՍ» ԹԵՐԹԸ

Կրասնոստարի մէջ հինգ տարիէ ի վեր լոյս տեսնէ Հարաւային Ռուսիոյ հայերուն քաղաքական անկախ թերթը՝ «Երկրամաս»ը: Թերթին մէջ կը հրապարակւին Ռուսիոյ եւ այլ երկրներու մէջ հայկական կեանքին, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Արցախի վերաբերող լուրեր: «Երկրամաս»ը կը գործակցի Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի լրատուական գործակալութիւններուն հետ: Թերթը լոյս կը տեսնէ ամիսը երկու անգամ՝ տարեց հազար տպագրանկով: Թերթը ընթերցողներ ունի Կրասնոստարի, Սթաւրոփոլի, Ռոստովի եւ ռուսական բազմաթիւ այլ գաղթածախներու մէջ: Թերթին ռուսերէն տարբերակը կ'արտոնէ կարգալի համացանցի <http://yerkramas.al.ru> կայքին վրայ:

ԱՆՑԵԱԼ ՏԱՐՈՒԱՆ ԸԱՄԵՍԱՏՈՒԹԵԱՄԲ

ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԻԶԱԾ Է 19 ՍԱՆԹԻՄԵԹՐՈՎ

Ըստ Հայաստանի հիարո-օդերեւութաբանութեան վարչութեան մասնագիտացած սպասարկումներու ծառայութեան, անցեալ շաբթուան ընթացքին անձրեւի տեղումներուն քանակը Գորիսի մէջ հասած է 41 միլիմետրի, իսկ Ստեփանաւանի եւ Քաջարանի մէջ՝ 17 միլիմետրի:

Հակառակ ասոր, գետերուն մէջ հոսկան փոփոխութիւններ չեն նկատուած, իսկ Սեւանայ լիճին մակարդակը իջած է 1 սանթիմետրով եւ կազմած է 1896,77 մետր, որ անցեալ տարուան նոյն ժամանակահատիկին համեմատութեամբ ցած է 19 սանթիմետրով:

«ԶՈՒԱՐԹՆՈՑ 1» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՐԸ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԻ

Հայաստանի ռուսական համակարգին մէջ տեղի ունեցած ապօրինութիւններուն վերաբերեալ իրարեւորութեան կազմակերպած յանցանքներու դէմ պայքարի ծիրին մէջ, անցեալ տարուան Օգոստոսին Հայաստանի մէջ ղաւար քաղաքէն հրապարակուած էր «Զուարթնոց 1» ընկերու-

թեան նախագահ Լորիկ Ղազարեանի դէմ: Գլխաւոր դատախազութեան տեղեկատուութեան համաձայն, նախաքննութեամբ լացայտուած էր, թէ Լ. Ղազարեան Արագածոտնի եւ Արմաւիրի ռուսական կ'օգտագործէ ապօրինի ձեւերով:

Անցեալ տարուան

«ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԵՐԳՁՈՒՂԻ ՆԱԻՐՈՒՂԻ ԱՆՎԵՐԴԵԱՆԻ

Մշակութիւնը պարզապէս մարգին մէջ իր մեծ ծառայութիւններուն համար եւ ծնողեան ՅՈՒՄԱՆԻԿԱՆԻ ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՐԻ Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեանի 25 Յունիսի հրամանագիրով արգելադրուած է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՐԻ ՔԱՐԱԹԷԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ՝ ՖՈՒՏՈՒՔԱՆ ՄԱՐՏԱԶԵԻԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԼԻԻՐԱԿԱՆ ԴԱՄ

24 Յունիսին Ֆուտոքան մարտաձեւի միջազ-

գային Ֆետերասիոնի գործադիր տնօրէն Իլիա Երկա տեսակցութիւն մը ունեցած է Լեւոնային Ղարարարի նախագահ Արկադի Ղուկասեանին հետ: Ան նախագահին փոխանցած է, թէ Ֆուտոքան մարտաձեւի միջազգային Ֆետերասիոնի որոշումով Լեւոնային Ղարարարի քարաթէկի սկզբնական շրջանին պետութեան վճարած էր իր կազմակերպութեան լիիրաւ անդամ ըլլալու կարգավիճակ, եւ թէ ղարարարեան պատուիրակութիւնը պաշտօնապէս պիտի հրաւիրուի այս տարի Փրակայի մէջ կայանալիք Եւրոպայի ախոյեանութեան: Ան նաեւ նշեց, թէ ինք տպաւորուած է արցախցի մարզիկներուն եւ ծեղրողութիւններով եւ ձեռքբերումներով:

Իլիա Երկայի կ'ընկերակցէին քարաթէկի Ռուսիոյ Ֆուտոքանի Ֆետերասիոնի նախագահ Վիթթոր Ֆիլիշչիւնը եւ Հայաստանի Ֆուտոքանի Ֆետերասիոնի նախագահ Կարէն Աւետիսեան: Նախագահ Ղուկասեան իր երախտագիտութիւնը յայտնեց իր խոսքով՝ արցախցի մարզիկներուն նկատմամբ անոր ցուցաբերուած ուշադրութեան եւ հոգատարութեան համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ՌՈՒՍԻԱՆ Է

Վերջերս Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Էդուարդ Ղազարեան յայտնած է, թէ Ուքրանիոյ համալսարանին մէջ նոր կրթական տարեշրջանի համար տասը անվճար տեղեր յատկացուած են Հայաստանէն Ուքրանիա մեկնելիք ուսանողներուն համար: Ան նշած է, թէ այս առնչութեամբ բանակցութիւններ տեղի ունեցած են Երեւանի մէջ, ԱՊՀի անդամ երկիրներու կրթութեան նախարարներու հանդիպման

մարայն գործակցութեան ծիրին մէջ առաջնակարգ տեղ կը զբաւէ Ռուսիան, որ իր համալսարաններուն մէջ (Մոսկուա եւ Ս. Փետերսպուրկ) ձրի կերպով երեսուն տեղ յատկացուցած է Հայաստանի ուսանողներուն: 27 համալսարանական եւ երեք մասնաձեւեր կ'ընկերակցեն:

Է. Ղազարեանի համաձայն, կարգ մը երկիրներու հետ ստորագրուած են ուսանողներու փոխանակման համաձայնա-

գիրներ, սակայն փոխանակումը միակողմանի է, որովհետեւ Հայաստանէն ուսանողներ կ'երթան այլ երկիրներ ուսակրթութեան կազմակերպութեան համար: Այդ պատճառով որոշ քաղաքակա-


նութիւն մը կ'որդեգրուի եւ առաջնահերթութիւնը կը տրուի Սփիւռքի հայերու ուսուցիչներու պատրաստութեան, յատկապէս հայագիտութեան մարզին մէջ՝ հայոց լեզուի եւ գրականութեան, հայոց պատմութեան եւ հայ արուեստի վերաբերող մասնագիտութիւններուն: Իսկ մնացեալ մասնագիտութիւններուն համար ներկայացուած զիմումնադիրները կ'ընդունուին վճարովի:

□

ՄԱՐԶԱԿԱՆ



ԱՇԽԱՐՀ



ՀԵԾԵԼԱՐՇԱԻ. ԶՈՒԻՅԵՐԻՈՅ ԾՐՋԱԿԱԶԸ

ՑԱՊԸԼ ՇԱՀԵՅԱԻ ՏՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ



Էրիք Ցապը կը հասնի ժամանակահատվածին:

Գերմանացի սփորինգեր Էրիք Ցապը Զուի-ցերիոյ շրջավազին իր երկրորդ մրցումը շահեցաւ, երբ երէկ Սիոնէն – Լօպան (167 քմ.) ճրդ հանգրուանին հանդիսացաւ առաջին:

Այսօր տեղի ունենալիք 9րդ եւ վերջին հանգրուանին, կը կարծուի, որ ամերիկացի Լէնս Արմսթրոնկ տիրանայ տիտղոսին, որովհետեւ 29 տարեկան Արմսթրոնկ, որ երկու անգամ շահած է Ֆրանսայի շրջավազը, այժմ 62 երկվայրկեանի առաւելութիւն ունի ընդհանուր դասաւորման մէջ. 2րդ դիրքը գրաւող ձիւլպերթօ Սիմոնի (Իտալիա) վրայ:

Ստորեւ՝ ճրդ հանգրուանին արդիւնքները.

1.- Էրիք Ցապը (Գերմանիա)	4 ժամ 2' 17"
2.- Սոլիուս Ռուքիս (Լիթվանիա)	Գոյնը
3.- Ռուպի Մաքիվըն (Աւստրալիա)	Գոյնը
4.- Ռուպի Սասոն (Ֆրանսա)	Գոյնը
5.- Ճերիք Կլոմսէր (Աւստրիա)	Գոյնը

Ընդհանուր դասաւորում.

1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.)	31 ժամ 00' 52"
2.- Ճիւլպերթօ Սիմոնի (Իտալիա)	1' 02" ուշ
3.- Վլասիմիր Պելլի (Իտալիա)	1' 34" ուշ

4.- Պէթա Չպերկ (Զուիցերիա)	2' 47" ուշ
5.- Ալեքսանտր Վինցուրով (Ղազախստան)	2' 48" ուշ

ՄԱՌՐՕ ՄԻԼՎԱ ՊԻՏԻ ԶՄԱՍՆԱԿՅԻ ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ԴԷՄ ՄՐՑՈՒՄԻՆ

Պրագիլի ֆուտպոլի ազգային խումբը, որ յառաջիկայ Կիրակի օր կարեւոր մրցում մը ունի կարաբեղիք Ուրուկուէլի դէմ՝ Նարաւային Ամերիկայի գօյիլէն ներս քաղաքի ունեցող 2002ի Մոնրիալի գօյիլէն մրցումներուն, երէկ «Խարուած» մը սրացաւ, երբ խումբին բժիշկը՝ Խոսէ Լուիս Ռոնքօ յայտնեց, թէ միջնադասի Մաորօ Միլվա վիրատու ըլլալով տիպի չկարենայ դաշտ ներկայանալ կարեւոր այս մրցումին, որ քաղաքի տիպի ունեցող Մոնրիալի քաղաքի մէջ:

34 տարեկան միջնադասի Մաորօ Միլվա, որ Տեխոքիս Քորուկուէլի (Մոնրիալ) հետ յայտնեց երկուսն ալ բոլորեց, փորձերու ընթացքին վիրատուութեամբ աջ ծուլկէ:

Ճափոնի եւ Նարաւային Քորէայի իր քաղաքի միջնադասի Մաորօ Միլվա կը գօյիլէն քաղաքի ղեկավար կազմակերպման մէջ եւ կը գօյիլէն Նարաւային Ամերիկայի ընդհանուր դասաւորման 3րդ դիրքին վրայ: Առաջին 4 դիրքերը կ'առնուին իրենց քաղաքի մէջ, իսկ 5րդ դիրքը գրաւող փլէյօֆի մրցում մը կը կապարէ Բիլիանիոյ ախտի եւ Աւստրալիայի հետ 5րդ քաղաքին համար: Ուրուկուէլի, որ այժմ կը գրաւէ 6րդ դիրքը, յաղթանակի մը տարազային տիպի գերազանցէ Քոլումբիան (Ճրդ) եւ Պրագիլի նման տիպի ունեցող նոյնքան կը, սակայն տեղի քաղաք կոչուիլը չէ մը:

Նշենք, թէ Կիրակի օրուան մրցումը քաղաքի տիպի ունեցող Մոնրիալի քաղաքի մէջ (Ուրուկուէլ), ժամը 22:00ին (Պէլլուրի ժամով):

● ՊՐԱԶԻԼԻ ֆուտպոլի ազգային խումբին մաս կազմող մարզիկներ՝ Ռիմալպօ եւ Անրոնի Քարլոս երէկ, իրենց կարարած յայտարարութեան ընթացքին, շեշտեցին, թէ չեն ուզեր իրենց մասնակցութիւնը բերել «Քուփա Ամերիկա»-ի մրցաշարին, որովհետեւ կ'ուզեն արձակուրդ առնել:

«Վերջին երեք օր չորս քաղաքներու արձակուրդ չեմ առած: Տարի մը ես առանց արձակուրդի՝ տարածա տիպի դասաւոր, որ քաղաք մը քաղաքանալով՝ վիրատուութիւն եւ չկա-

ԹԵՆԻՍ. ՈՒՐՄՊԸԼՏԵՐ

ՍԱՐԳՍԵԱՆ ԱՆՑԱԻ Գ. ՇԱՆԳՐՈՒԱՆ

Ուիմպլոնի թենիսի մրցաշարին Բ. հանգրուանի մրցումներուն, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան շարունակեց իր յաղթանակները եւ 6-2, 6-4, 3-6 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատուցել ետք սպանացի թոմի Ռուպի-րետոն, անցաւ Գ. հանգրուան:

Երէկուան մրցումներուն (ընդունալ Բ. հանգրուան) մրցաշարքէն դուրս մնացողներուն շարքին էին Մայքըլ Չանկ (Մ. Ն.), Թոմաս Եոհանսոն (Շուէտ), Քարլոս Մոլա (Սպանիա), Թոմ Վուտպրիս (Աւստրալիա) եւ Ուիլիշնէր:

Աղջկանց մրցումներուն, մեծագոյն անակնկալ ստեղծողը եղաւ ամերիկացի Լիլիա Օսթերլոհ, որ 7-6 եւ 7-5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք, մրցաշարքէն դուրս ձգեց սպանացի Արանցա Սանչէս - Վիքարիոն (դասաւոր՝ 13րդ): Նշենք, թէ Օսթերլոհ դասաւորման մէջ:

Ստորեւ՝ երէկուան կարգով մրցումներուն՝ արդիւնքները.

● ԱՂԶԻԿԵՐ

Մակտալէնա Մալի-եա (Պուլիարիա) - Էլի-նա Պոլիկիս (Ռուսիա) 7-5 եւ 7-5

Ճենիֆըր Քափրի-թի (Մ. Ն.) - Ֆրանչես-քա Չիաուրէ (Իտա-



Եոնաս Պիորքման

լիա) 6-3 եւ 6-1
Էմի Ֆրայկիեր (Մ. Ն.) - Ճենիք Լի (Թա-լան) 6-4 եւ 6-2

Լիլիա Օսթերլոհ (Մ. Ն.) - Արանցա Սանչէս - Վիքարիո (Սպանիա) 7-6 եւ 7-5

Էլենա Տենիսի-եա (Ռուսիա) - Պիարքա-լամատէ (Գերմանիա) 4-6, 6-3 եւ 6-2

մանիա) 7-5 եւ 6-1

Սանտին Թեպիւտ (Ֆրանսա) - Քարիս-Նապոտոլա (Սլո-վակիա) 6-0 եւ 6-1

Սերենա Ուիլիքմս (Մ. Ն.) - Պարպարա Ռայթըր (Գերմանիա) 6-4 եւ 6-0

Քոնչիթա Մարթի-նէլ (Սպանիա) - Սանտրա Սաքիլ (Մ.



Լիլիա Օսթերլոհ

Անք Շուպըր (Գերմանիա) - Մարի-նա Ռիկարտի (Գեր-

Ն.) 7-5 եւ 6-4
Լիւս Բրասնո-րուքքալա (Ռուսիա) - Վիլիամիա Ռուսո-Փասքուալ (Սպանիա) 6-3 եւ 7-6

● ՏՂԱԸ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍ-ԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) - Թոմի Ռուպի-եա (Սպանիա) 6-2, 6-4, 3-6 եւ 6-1

Թիմ Շենման (Բրի-տանիա) - Մարթին Լի (Բրիտանիա) 6-2, 6-3 եւ 6-4

Մարա Սաֆին (Ռուսիա) - Տանի-լեթթ (Ֆրանսա) 7-6, 3-6 եւ 1-2 (Նետք մրցումը չաւարտեց)

Մակնուս Լարսըն (Շուէտ) - Քրիս Վու-րաֆ (Մ. Ն.) 6-4, 6-4 եւ 6-2

Եոնաս Պիորքման (Շուէտ) - Մայքըլ Չանկ (Մ. Ն.) 7-6, 7-6 եւ 6-4

Էմիլ Ռոսիլ (Մ. Ն.) - Թոմաս Եոհանսոն (Շուէտ) 7-6, 6-1, 4-6 եւ 7-6

Խուան Քարլոս Ֆե-րեթ (Սպանիա) - Ճե-լսո Սթոյքման (Աւստրալիա) 7-6, 4-6, 6-3, 6-7 եւ 6-3

Կորա Սիմիլի-եա (Խորվաթիա) - Քարլոս Մոլա (Սպանիա) 6-7, 6-3, 6-4 եւ 6-4

Ռիլմըն Սլոնիք (Չեխիա) - Թոմ Վուտպրիս (Աւստրալիա) 6-4, 7-6, 2-6 եւ 6-3

Արնօ Քլեման (Ֆրանսա) - Գերման Փուլիսթե (Սպանիա) 6-3, 6-3 եւ 6-4

Կրիկ Ռուկետա (Բրիտանիա) - Պայրն Պէլք (Չիլիական) 6-1, 6-3 եւ 6-4

Փիթ Սամվուս (Մ. Ն.) - Պէրի Քուլմ (Բրի-տանիա) 6-3, 6-2, 6-7, 4-6 եւ 6-3

ՀԱՃԻ՝ ՌՈՒՄԱՆՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻԶ

Ռումանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին պատասխանատուները յայտնեցին, թէ Շքեու Պուքրէշի, Ռեալ Մատրիաի եւ Պարսելունայի նախկին մարզիկ Ճիորճի Հաճի նշանակուեցաւ Ռումանիոյ ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ, փոխարինելով Լախալաու Պոլոնին, որ անցեալ շաբաթ իր պաշտօնը լքելով երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց Սփորթինկ Լիգային հետ (Փորթուգալ):

36 տարեկան Հաճի, որ երեք շաբաթ առաջ ֆուտպոլիստի իր ասպարէզին վերջ մը դրած էր (անոր վերջին ակումբը եղաւ բրազիլացի Կալա-բասարայը), Ռումանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ Միստա Սանտուի կողմէ կատարուած պաշտօնակալ յայտարարութենէ անմիջապէս ետք, արդէն իսկ պայմանագրութիւն մը ստորագրեց:

Ֆետերասիոնը յայտնեց նաեւ, թէ Եմերիք Ինենչ նշանակուած է ազգային խումբին *թեր-վոյ* պատասխանատուն, իսկ Կալիլիա Պալիմբ Հաճիի օգնականը:

Մարզիչ իր նշանակումէն ետք Հաճի յայտնեց, թէ պիտի շարունակէ այն աշխատանքը, որ կ'ընէր իր նախորդ Ռումանիան հասցնել 2002ի Մոնտիալին:

Ռումանիա այժմ Եւրոպայի ցամաքամասէն մերս տեղի ունեցող 2002ի Մոնտիալի գտումի մրցումներուն Ը. խմբակէն մերս կը գրաւէ դասաւորման 2րդ դիրքը: Անկալ յառաջիկայ Սեպտեմբեր 5ին Հունգարիոյ հիւրը պիտի ըլլայ, իսկ Հոկտեմբեր 6ին պիտի հիւրընկալէ Վրաստանը:

Նշենք, թէ Հաճի, Ռումանիոյ ֆուտպոլի ազգային խումբին շապիկը կրած է 125 անգամ: Ան 86 անգամ եղած է ազգային խումբին խմբապետ եւ նշանակած՝ 35 միջազգային կոլ:

ԼՈՒՐԵՐ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ

● ՊԱՅԻՐՆ ՄԻՒՆԻՔՆԻ բերդապահ Օլիվեր Քան, երէկ գերմանական «Դիլտ» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ կը մտադրէ Պարսելունայի նման կազմի մը փոխանցուիլ:

Հակառակ անոր, որ 32 տարեկան բերդապահ մինչեւ 2003 պայմանագրութիւն մը ստորագրած է Եւրոպայի ախտեան Պայէն Միւնիխի հետ:

Մինչ Քան այս յայտարարութիւնը կը կատարէր, անդին անոր ակումբին պատասխանատուները կը յայտնեն, թէ մտադրէ են բերդապահին պայմանագրութիւնը երկարաձգելու մինչեւ 2006, ինչ որ կը նշանակէ, թէ ան ֆուտպոլիստի իր ասպարէզը պիտի աւարտէ Պայէն Միւնիխի հետ:

● ԼԻԾԻ միջնապահ Օլիվիէ Տաքուր երէկ հինգ տարեկան երկարաձգեց պայմանագրութիւնը իր խումբին հետ, յայտնեց ակումբին նախագահ՝ Փիթըր Ռիոյ-տէլլ, աւելցնելով, որ շատ հաւանաբար մինչեւ շաբաթավերջը նոր պայմանագրութեան մը շուրջ համաձայնի նաեւ աւստրալիացի յառաջապահ Մարք Վիտու-բալի հետ:

Նշենք, թէ Տաքուր, անցեալ տարի Լանսէն միացած էր Լիծի, փոխան տասը միլիոն տոլարի:

● ՊՈՐՈՒՍԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏԻ պատասխանատուները յայտնեցին, թէ ամբողջացուած են իրենց միջնապահին՝ Քրիսթիան Ներկիլըրի Ռէյնքորգ փոխանցումը, փոխան՝ 2,5 միլիոն տոլարի:

28 տարեկան գերմանացի միջազգային մարզիկ Ներկիլըր, որ երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց իր նոր ակումբին հետ, այսպիսով պիտի ըլլայ Եոքի Ալպէրթը փոխարինողը, որ Ռէյնքորգը լքելով միացաւ Համպուրկի (անցեալ ամիս):

● ՄԻՏԸԼԶՊՈՐՈՅԻ խմբապետ Փոլ Ինս երէկ մէկ տարեկան երկարաձգեց պայմանագրութիւնը իր ակումբին հետ, վերջ մը զնելով վերջերս շրջան ընող այն տարածաշրջաններուն, թէ շատ հաւանաբար վերադառնալ Իտալիա եւ միանալ Պրելիալի:

Նախագահ Ինսթր Միլանի մաս կազմած (1995էն 1997) անգլիացի միջազգային միջնապահ Փոլ Ինս 2001-2002 եղանակին իբրեւ նոր մարզիչ պիտի ունենայ Սթիւ Մաքքլարընը:

● ՍՈՒԱՔՈՅԻ Ֆրանսացի յետապահ Ֆրիլի Քրիսթիան վաղը կը մեկնի Պարսելունա՝ տեղւոյն կազմին հետ վերջնականապէս յստակացնելու իր փոխանցման հարցը: Ան պիտի ենթարկուի բժշկական ընտու-թեանց: Քրիսթիան վաղ փոխանցումը 10 միլիոն տոլար արժած է ըստ սպանական կազմին, սակայն Ֆրանսական կողմը կը հերքէ նման լուր:

Պարսելունա նաեւ նախնական պայմանագրութիւններ ստորագրած է արժանթինցիներ իսպանացի Սալու-լայի եւ իսպան Ռոման Ռիքելմէի հետ, սակայն անոնց փոխանցման պաշտօնական ստորագրութիւնը տա-կելին չէ կատարուած: Խաւիէ մաս կը կազմէ Ռիլըր Փլէյթի, իսկ Խուան Պրա Ժուսիլի: Պարսելունա նաեւ ունի «հետապնդումներու» ցանկ մը: Ան «կը հետապնդէ» Թոմենհամի անգլիացի միջազգային յա-

ռաջապահ Սոլ Քլեմընը:

ԱԶՐԴԵՅՈՒՆ ԻՐ ՌԵԺԵ ՊԵՏԵ Ե ԶՈՅՑ ՏԱՅ ԴԱՅԱՍՏԱՆԻՆ

ԿՐԸՆԵ ԶՈՒՆՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ

Այրապետանի արտաքին գործոց նախկին նախարար Թուֆիք Չուֆուկարովի համաձայն՝ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահության Մալթայի հանդիպումը պիտի չհիւրացնէ Լեռնային Ղարաբաղի հարցին լուծումը:

Հարցազրույցի մը ընթացքին Չուֆուկարով ըսաւ, որ Հայաստան պաշտօնապէս յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղ կա՛մ պէտք է միանայ Հայաստանին, կա՛մ անկախութիւն ստանայ: Նկատի ունենալով ներկայ պայմանները, ոչ մէկ բանակցութիւն կրնայ արդիւնաւէտ ըլլալ: Ան ըսաւ, որ հարցի լուծման համար երկու գերութեք պէտք է ճնշում բանեցնեն Հայաստանի վրայ, կամ Այրապետանի պէտք է ցոյց տայ իր ուժը: «Գերութեք չեն ուզեր ճնշում բանեցնել Հայաստանի վրայ: Հարցի լուծման աւելի իրապաշտ տարբերակը այն է, որ Այրապետանի ուժ բանեցնէ Հայաստանին վրայ», ըսաւ Չուֆուկարով:

ԼԻՔԱՆԱՆ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՔԱՐԱՄԻ ԵՒ ԱՐԻՏԻՒ ՄԱՍԼՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԱՍՈՒԼԻՍԸ

Չքուսաշրջութեան եւ տեղեկատուութեան նախարարներ Քարամ Քարամ եւ Ղապի Արիտի երկէ տուին մամլոյ միացեալ ասուլիս մը, յայտարարելու համար շրջապատներումը Լիբանանի մէջ պքուսաշրջութեան կարեւորութիւնը ծանօթացնելու արշաւին:

Ասուլիսին ընթացքին թղթակիցներու հարցումներուն պատասխանելով Արիտի ըսաւ, որ «Միտըլ Իպ» ռազմական ընկերութեան առընչութեամբ նախարարաց խորհուրդի որոշումը պիտի գործադրուի լաւագոյն կարելի ձեւով, որովհետեւ այդ որոշումին մէկնակետն է ընկերութիւնը փրկելու եւ անոր գործունէութիւնը լաւագոյն շարունակելու տուեալները ապահովելու վճարակաւութիւնը, առանց մոռնալու պաշտօնեաներու եւ աշխատակիցներու իրաւունքները:

Նախարար Քարամ իր խօսքին մէջ ընդգծեց, որ նախարարութիւնը նախաձեռնելու է օժանդակելու միջազգային պքուսաշրջային փառատօներուն:

Ան նաեւ ըսաւ, որ պքուսաշրջութեան նախարարութիւնը «հնթրնէթ»ի վրայ նոր կայք մը ստեղծած է, հաղորդելու համար Լիբանանի պատմական հնութեանց վայրերուն մասին տեղեկութիւններ:

Նախարարութեան կայքին մէջ «Սուրիա այցելեցէք» խորագրեալ բաժնին մասին հարցումի մը պատասխանելով Քարամ քաջատրեց, որ անիկա պետեղումն է Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի միջեւ ստորագրուած պքուսաշրջային մարզէն ներս գործակցութեան համաձայնութեան հիմամբ, եւ այդ երկիրներու պքուսաշրջութեան նախարարութիւններու կայքերուն վրայ նոյնպէս պետեղումն է Լիբանան այցելելու հրաւերներ:

Քարամ եւ Արիտի ըսին, որ լիբանանցի քաղաքացիին ուղղուած այս արշաւներուն նպատակն է պարզացնել պքուսաշրջիկներուն հետ դրական եւ սիրալիր վերաբերում ունենալու կարեւորութիւնը, եւ նոյն ծիրէն ներս կենսոլորտը պահպանելու կարեւորութիւնը:

ՅՈՅՍԻ ԻՍԿԱԿԱՆ ՆՇՈՅԼՆԵՐ ԿԱՆ

ԿՐԸՆԵ ՆԱԽԱՐԱՐ ՍԻՆՈՐՈՐԱ

Ելեմուտքի նախարար Ֆուադ Սինիորա կոչ ուղղեց որդեգրելու հանդարտ երկխօսութիւնը, որպէսզի կառավարութեան բարեկարգչական քայլերուն չուրջ տարակարծութիւնները միջկրանանեան հարցի շփոթութիւնը:

Անհրաժեշտ է, որ բոլորը միասնաբար ստանձնեն ղեկարար որոշումներու պատասխանատուութիւնն ու անոնց պատճառելիք ցաւերը, որովհետեւ յոյսի իսկական նշոյլներ կան, ըսաւ ան:

Սինիորա ըսաւ, որ «Միտըլ Իպ» ընկերութեան, «Թելէ Լիպան»-ի եւ ընկերային հեռաձայնի ղեկավարութեան միջոցառումները օրինական են, եւ պետական գումարներու մօտուրէի ճամբաները փակելու աշխատանքը պիտի շարունակուի:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԵՐԻՆԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ

25 Յունիսին վրաստանի ազերիներով բնակուած Պոլնիսի շրջանին մէջ բնակող ազերիները կատարած են բողոքի ցոյց մը՝ ուղղուած երկու ազերիներ ձերբակալած ոստիկաններուն դէմ:

Շրջանի ազերիներուն շահերը պաշտպանող Կէյրաթ Ժողովրդավար Ծարժումի ղեկավար Ալիպա-

պա Ալեքսերով «Ապատութիւն» ռատիոկայանին յայտնած է, թէ 23 Յունիսին երկու ազերիներ եւ մէկ յոյն գողութեան յանցանքով ձերբակալուած են վրացական ոստիկանութեան կողմէ եւ ենթարկուած են ծեծի ու ֆիզիքական խոշտանգումի: Զերբակալուածները փոխադրուած են շրջանին հիւանդանոցը:

Այս առիթով տեղի ունեցած ցոյցին մասնակցող ազերիները ըսած են, թէ վրացական իշխանութիւններուն կողմէ ազերիներուն վրայ բանեցուող ճնշումը հետզհետէ աւելի կը սաստկանայ: Անոնք անցուցած են, թէ վրացական ոստիկանութիւնը ազերիները կը մեղադրէ ռմբակներ գործելու յանցանքով եւ թէ կարգ մը ուժեր հետաքրքրուած են ազերիներու եւ վրացիներու միջեւ ազգագրական բախումներու յառաջացումով:

Ա. Ալեքսերով ըսած է, թէ 25 Յունիսին տեղական իշխանութիւններու եւ վրացական խորհրդարանին մէջ ազերի երեսփոխաններու միջեւ տեղի ունեցած հանդիպումէ մը ետք Պոլնիսի մէջ կացութիւնը կայունացած է եւ տեղւոյն իշխանութիւնները միջոցառումներ որդեգրած են երեք ձերբակալուածները խոշտանգած ոստիկաններուն դէմ:

Այրապետանի պաշտօնատարներ ոչ մէկ ակնարկութիւն կատարած են այս դէպքին մասին:

Վրաստանի մէջ կ'ապրին 500 հազար վրացիներ, սակայն անոնցմէ ոմանք գաղթեցին 1990ականներու սկիզբը, երբ Զվիատ Կամսախուրտիան վրաստանի նախագահն էր:

ՍԱԿԱՐԱՆ

ՊԵՐՈՒՄԻ ՍԱԿԱՐԱՆԻՆ ԴԵՋ ՕՏԱՐ ՊՐԱՄԱՆԻՉԸ ԳՆՈՒՄԱՆ ՍԱԿԱԳԻՆԵՐԸ ԴԵՏԵԼԵԱԼԸ ԵՐԵՎԱՆԻՆ:

Սուրիական թղթակի	31.50 - 33.50	լ.ն.
Իրաքեան տինար	50.00 - 51.00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3990.00 - 4010.00	լ.ն.
Քուէյթեան տինար	4898.42 - 4902.42	լ.ն.
Յորդանանեան տինար	2118.24 - 2122.24	լ.ն.
Ա.Մ.Էմիրութեանց տիրիւմ	407.43 - 411.42	լ.ն.
Սէուտական ռիալ	399.90 - 403.99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900.00 - 3930.00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412.15 - 416.15	լ.ն.
Եգիպտական կիւնէ	387.72 - 391.72	լ.ն.
Անգլիական քթերլին	2132.70 - 2136.78	լ.ն.
Գերմանական մարք	662.46 - 666.53	լ.ն.
Հոլանտական ֆլորէն	588.65 - 592.42	լ.ն.
Ֆրանսական ֆրանք	196.74 - 199.40	լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	851.32 - 855.93	լ.ն.
Պելճիքական ֆրանք	30.63 - 34.65	լ.ն.
Դանիական քուրոն	230.22 - 250.12	լ.ն.
Սպանական փէպէթա	8.02 - 9.04	լ.ն.
Թրքական լիրա	0.0365 - 0.0370	լ.ն.
Կիպրական փաուստ	2263.79 - 2267.45	լ.ն.
Իտալական հապար լիր	669.45 - 673.48	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12010 - 12014	լ.ն.
Ամերիկեան տոլար	2450 - 2452	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501.00 - 1514.00	լ.ն.
Քանադական տոլար	994.45 - 998.66	լ.ն.
Աւստրալիական տոլար	782.88 - 786.80	լ.ն.
Եւրո	1297.91 - 1301.93	լ.ն.

ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	77,000 - 87,000	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	87,000 - 97,000	լ.ն.
Մեքսիքական փէսոս	450,000 - 490,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	12,300,000 - 12,800,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	273.33 - 275.28	\$
Մէկ օսն արծաթ	4.33 - 4.37	\$

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՆԻ Ա. ԶՂՈՒՄ ԳԻՆԻ Բ. ԶՂՈՒՄ		
Ա. կարգի	5 3/8	5 3/8
Բ. կարգի	5 5/8	5 5/8
բաժնեթուղթ		

ԼՈՆՏՈՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, ղրամախիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8594
Ֆրանսական ֆրանք	7.6283
Քանադական տոլար	1.516
Դանիական մարք	2.2745
Հոլանտական ֆլորէն	2.5628
Չեխոսլովակական ֆրանք	1.7655
Պելճիքական ֆրանք	46.912
Իտալական լիր	2251.74
Ճափոնական եէն	124.34
Շուեդական քուրոն	10.742
Նորվեգիական քուրոն	9.2024
Դանիական քուրոն	8.647
Մէկ սքերլին	1.4164

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4889

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- Գարեգին Սրբ-ւան ծառանցի երկերէն (երեք բառ):
- Ամապուռն - Վարժ, հմուտ:
- Աղբիւր - Ասիական զրամանիշ - Տարիք:
- Թափուած, միակ-տուր - Երգչկայի տար-բեր անուանումը:
- Անորոշ դերանուն - Հոմանի:
- Իմացականութիւն - Կրկնուած բաղաձայններ:
- Արական անուն - Փորթուգալեան նախկին զաղութ շնորհաստանի մէջ:
- Վարկոտ - Խեղ:
- Փակաւոր բանալու գործիք - Յետաճէ:
- Արական անուն - Համադասական շաղկապ:

ՈՒՂԱՄԱՅԵԱՅ

- Միջնադարեան Հա-յաստանի ուսումնական կեդրոններէն - Հայ տղայ:
- Մաղիամի թագա-ւորներէն - Անվախ:
- Շաղկապ - Իրերա-յաջորդ տառեր - Արիւն-եան երկիր:
- Տարադնել - Տաղու-մի հետք:
- Թէ ուր - Թատերա-կան պատկեր:
- Իզական օտար անուն - Կրկնուած ձայ-նաւորներ:
- Նմանաձայն զիրեր - Մանեթիք:
- Նուստ - Շագա-նակ:
- Բրինձ - Ճիւղ:
- Ձայնակից տառեր - Հիւսնոտ:

ԹԻՒ 4888

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ե	Դ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
2	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
3	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
4	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
5	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
6	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
7	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
8	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
9	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
10	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Շարուն նախապէս պահանջած էր վեց շաբթուան ամբողջա-կան խաղաղութիւն, որպէսզի գործադրու-թեան դնէ Միջրբի տեղեկագիրը, որ կոչ կ'ուղղէ փոխադարձ վստահութիւններ չոյլ քայլերու, հրէա-կան բնակեցման վայրերու կառուցման դադրեցում, ինչպէս նաեւ՝ վերադարձ խաղաղութեան բնակ-ցութիւններուն:

Իսրայէլացի վարչապետը հերքեց այն կողական քաղաքա-լորները, ըստ որոնց Իսրայէլ եւ Միացեալ Նահանգներ տարա-կարծիք են: Շարուն ըսաւ, որ շատ հե-տաքրքրական ու յա-ջող հանդիպում մը ու-նեցած է Պուշի հետ: Հակառակ այս հաս-տատումին սակայն, մեկնաբաններ ու դե-տեր ըսին, որ Պուշ ու Շարուն տարակարծիք կը մնան Միջրբի տեղեկագիրի գործադ-րութեան պայմաննե-րուն ու եղանակին մասին:

Պուշ ըսաւ նաեւ, որ

Փաուր Միջին Արե-ւելք ուղարկած է, որ-պէսզի իրապաշտ ար-ժեւորում մը կատար-ւի ամբողջ կացու-թեան:


Միւս կողմէ, պա-ղեստինցիները անմի-ջապէս հակադարձե-ցին Շարունի տասնօր-եայ պայմանաժամի-րէրու կառուցման դադրեցում, ինչպէս նաեւ՝ վերադարձ խաղաղութեան բնակ-ցութիւններուն:

Պաղեստինեան իշ-խանութեան տեղեկա-տուութեան նախա-րար Եսաթր Ապտ Ռա-պո յայտնեց, որ պա-ղեստինցիները գոհ չեն լսելով Պուշ - Շա-րուն տարակարծու-

թիւններուն մասին: Ան անցնուց, որ Շա-րուն պէտք է սկսի գոր-ծադրութեան դնելու Սի. Այ. Էյ.ի տնօրէն ձորձ Թեւրթի մշակած ծրագիրը, որ Իսրայէ-լէն կը պահանջէ ժա-մանակացոյց մը ճշդել Կապայէն ու Այսրյոր-դանանէն ուժերը հե-ռացնելու համար: Թե-ւրթի ծրագիրը Իսրա-լէլէն կը պահանջէ նա-եւ վերցնել պաղես-տինեան շրջաննե-րուն շրջափակումը:

Միւշ այդ, Փաուրը հասաւ Եգիպտոս, ուր տեսակցութիւն ունե-ցաւ նախագահ Հիւս-նի Մուպարաքի հետ, ապա ան մեկնեցաւ Իսրայէլ, որմէ ետք կ'անցնի պաղես-տինեան շրջաններ: Փաուրը պիտի այցելէ նաեւ Յորդանան եւ շրջապատյալ աւար-տին՝ Փարիզի մէջ տե-սակցութիւն պիտի ու-նենայ Սէուտական Արաբիոյ գահաժա-ռանգ իշխան Ապտա-լայի հետ:

(ՌՈՅԹԸՐԸ)



ՀՐԱՇԱԼԻ ՆՈՐ ԷՐՔՈՆՏԻՍԻՈՆԵ

AUTO RESTART

Իսկական ուժ

Բոլորին մատչելի գինը

Ճափոնական արհեստագիտութիւն

9000ԷՆ 24000 BTU

Պատին, գետնին կամ առաստաղին վրայ ամրացուող տեսակներու հաւաքածոյ

Ըեռ. 04-718444, Ֆաքս. 04-718555

UNILEC
EXCLUSIVE DISTRIBUTOR